«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարանում

Հարց՝ Ինչու՞է ընթերցանությունը կարևոր երեխայի համար:

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լարիսա Ջորկնցյան

Ուսումնական հաստատություն՝ Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց

Աշտարակ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3

2. Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում----------5

3. Ընթերցանության մեթոդները տարրական դպրոցում----------8

4.Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում----------16

5.Եզրակացություն----------20

6.Օգտագործված գրականության ցանկ----------21

Ներածություն

Մարդու բազմակողմանի զարգացածության հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:Դպրոցի առջև ծառացած կարևոր խնդիրներից է աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որի հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց ընթերցանության, քանի որ ընթերցանությունը մտածողության և մտավոր զարգացման ակունքներից մեկն է: Այն երեխաների համար պիտի դառնա գիտելիքների ձեռքբերման ամենազոր գործիք, հոգևոր հարստության աղբյուր: Արդի կրթական համակարգում, հատկապես տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում սովորողների երևակայական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Կարդալու միջոցով աշակերտները ոչ միայն ճանաչողական գիտելիքներ են ստանում, այլև զգում են մայրենի լեզվի գեղեցկությունը, նրբորեն ընկալում բառը, խոսքը, իսկ դրան հնարավոր է հասնել նույն բնագրի բազմակի ընթերցման ճանապարհով: Բնագրի յուրաքանչյուր ընթերցումը երեխայի առջև բացում է նոր աշխարհ՝ իր գույներով ու երանգներով, քանի որ ամեն մի ընթերցման ժամանակ նա հայտնաբերում է նախկինում չնկատված նոր մանրամասներ: Եվ որպեսզի կրկնաընթերցումը ձանձրալի չլինի, նախատեսվում են կարդալու բազմաթիվ ձևեր:

Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունքներ:

‹‹Ընթերցանության օգտավետության մասին զրույցում ժամանակակից փիլիսոփա Անդրեյ Բաումեյստեյրը նշում է. ‹‹Տեսողական ինֆորմացիան ուղեղը պասիվ է ընկալում, այն վերլուծական հմտություն չի պահանջում: Ինչպես գիտենք, տեքստը սիմվոլների հավաքածու է. երբ կարդում ենք տեքստը, ըստ էության, մեր ուղեղը վերծանում է այն. տառերից՝ բառ,

բառերից՝ նախադասություն, որից հետո մենք կարդացածը իմաստավորում ենք, ինչի հետևանքով ուղեղը ահռելի ակտիվ աշխատանք է կատարում, ինչը մղում է ուղեղի զարգացմանը, հետևաբար՝ մարդու զարգացմանը: Որքան էլ ընթերցումը համարեն հնացած սովորություն, տեղեկություն ստանալու աղբյուրներ դիտարկվեն տեսանյութը, ձայնագրությունները, համացանցը, միևնույնն է, ընթերցանությունը ուղեղը մարզելու, կոփելու եզակի, լավագույն միջոցներից է››:

Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման ձևաչափի, պայմանականորեն բաժանված են 2 բաժինների՝ դասարանային և արտադասարանային:

Դասարանային աշխատանքները կապված են մայրենիի առարկայական բովանդակության և նպատակների հետ: Դրանք ընդգրկվում են առարկայական տարեկան թեմատիկ պլանավորման մեջ և առաջարկվող ժամանակացույցով իրականացվում են դասերի ընթացքում: Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ՝ դպրոցից դուրս, կամ ընթերցանության խմբակի ձևաչափով՝ շաբաթական առնվազն 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ ծավալով: Խմբակը կարող է ղեկավարել գրադարանավարը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչը կամ դասվարը:

Սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման դասարանային և արտադասարանային աշխատանքները պետք է հանգամանորեն պլանավորվեն, իրագործվեն հետևողականորեն, ունենան աստիճանական ձևով զարգացող բնույթ և փոխլրացնեն իրար:

Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում

Ինչպես հայտնի է,արդյունավետ ուսումնական գործընթացը սովորաբար կառուցվում է՝ հաշվի առնելով երկու հիմնական գործոն.

ա)աշակերտների կրթական կարիքները, որոնք պարզվում են հատուկ ուսումնասիրությունների ճանապարհով,

բ)պետության կողմից հաստատված չափորոշիչներով և առարկայական ծրագրերում սահմանված պահանջներով, որոնց հիման վրա սահմանվում են, թե ինչ պետք է իմանան և կարողանան աշակերտներ յուրաքանչյուր դասարանի ավարտին:

Տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման գործընթացում լուծվում են հետեւյալ հիմնական խնդիրները.

• ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունը ¥որակական հատկանիշների պահպանմամբ,

•մաքրել, հղկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու ¥գրավոր և բանավոր) ունակությունը,

•ձևավորել հաղորդակցական և համագործակցային կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,

•ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ,

•ձևավորել փոքրածավալ տարաբնույթ, ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը՝ գաղափարը, հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու կարողություններ,

•ձևավորել ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտության գիտակցություն, դրանցով կյանքում առաջնորդվելու ունակություն, զարգացնել արժեհամակարգը և դաստիարակել նրա բաղադրիչները պահպանելու ու հարստացնելու պահանջմունք,

•նպաստել իր բնակավայրի և այնտեղ ապրող մարդկանց զբաղմունքի,մշակութային արժեքների մասին գիտելիքների ձեռքբերմանը,

•գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային

հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը,

•աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով ձևավորել պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին, պայմաններ ստեղծել երեխաների իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքների ձեռքբերման և դրանք գործածելու ուղղությամբ ունակությունների մշակման համար,

•ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը, ինքնագնահատմանը, նրա կարիքների բավարարմանը, ձևավորելով համագործակցային ունակություններ համակեցության որակներ,

•սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները ¥գիտելիքները, փորձը, ձեռքբերումները) գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարևորությունն ու անհրաժեշտությանը:

Այսինքն՝ աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռքբերման գործընթացի պասիվ մասնակից ¥ուսուցչի կողմից գիտելիքների հաղորդում, իսկ աշակերտի կողմից դրանց անառարկելի ընկալման պարզ, միակողմանի գործընթաց), **այլ ակտիվ գործընկեր, գիտելիքներ ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն, ուսումնական գործընթացի գործուն մասնակից:**

Ներկայացնենք ուսուցման կազմակերպման ձևերի դասակարգումը.

Ուսուցման կազմակերպման ձևերը

Ուսուցման գործընթացի առանձին օղակների կառուցվածքը, պարապմունքների տեսակները

Ըստ դիդակտիկ նպատակի՝
•տեսական
•գործնական
•աշխատանքային
•համակցված
Վ.Ա. Օնիշչուկ

Ըստ կառուցվածքային բաղադրիչների գերակշռող նպատակի հաշվառման՝
•ներածական դաս
•գիտելիքների խորացման դաս
•գործնական դաս

Ըստ ուսուցման ձևի
•անհատական
•կոլեկտիվ-խմբային
•անհատական-կոլեկտիվ
Ա. Վ. Խուտորսկո

•գիտելիքների համակարգման և ընդհանրացման դաս
•գիտելիքների, ունակությունների և հմտությունների վերահսկման և ստուգման դաս
•համակցված դաս
Վ. Ի. Անդրեև

Ուսուցումը պիտի իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտելիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները՝ անցնելով վերը նշված ճանապարհը: Այսինքն՝ ուսումնական գործունեության համար պատասխանատու են և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր դրդապատճառները, իր նպատակները, և յուրաքանչյուրին անհրաժեշտ են խթաններ:

Յու.Կ.Բաբնսկին.Ուսուցման մեթոդների մեջ առանձնացնում է հատուկ խթան-մեթոդներ, և որոնք խմբավորում է այսպես.

‹‹1.Ուսումնահիմացական գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդներ,
2.ուսումնահիմացական գործունեության խթանման և դրդապատճառային մեթոդներ…››

Մենք կարևորում ենք մայրենիի ուսումնասիրման գործընթացում մասնավորապես աշակերտական նպատակների իրականացմանը մղող խթանները: Այդ խթաններ են աշակերտին մղում սովորելու: Հոգեբաններն ու մանկավարժները գտնում են, որ միևնույն նպատակները կարող են իրականացվել տարբեր դրդապատճառ-խթանիչներով, և դրանք կարող են աշակերտի ցանկացած գործունեության արդյունավետության վրա տարբեր կերպ ազդել.

‹‹Միևնույն իրը մարդը կարող է պատրաստել, որպեսզի՝

1. բավարար իր որևէ պահանջմունքը,
2. բավականություն պատճառ է ուրիշին,
3. ազատվի համառ խնդրանքներից,
4. իր պարտքը կատարի…››:

Կարծում ենք՝ քննարկման նյութ է այն, թե նշվածներից, որոնք կրտսեր դպրոցականների համար կարող են դառնալ մայրենիի սիրով սովորելու դրդապատճառներ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընթերցանությունը աշակերտների մտավոր զարգացումը, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակումն ապահովող միջոց է, այն նաև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց է: Լեզուն, ինչպես գիտեք, միայն լեզվական ու քերականական օրենքների ու օրինաչափությունների գումարը չէ, այլ՝ բառերի այն պաշարը, որը շինանյութ է ծառայում մտքերը ‹‹լեզվական թաղանթով›› պատելու համար: Հենց այդ նկատառումով էլ ընթերցանության խնդիրներից մեկն էլ բառերի՝ մայրենի լեզվի բառային հիմնական ֆոնդի, իսկ մասամբ էլ՝ նրա բառագանձի ուսուցումն է: Ընթերցանության միջոցով աշակերտները ավելի լավ կսկսեն տարբերել և առանձնացնել արձակ և չափածո ստեղծագործությունները, պատմվածքն ու հեքիաթը, առակն ու ոտանավորը, առածը, ասացվածքն ու հանելուկը, ինչն էլ կնպաստի նրանց հետագա զարգացմանը և առաջընթացին:

Գեղարվեստական ստեղծագործության հիմնական տեսակների՝ արձակ (պատմվածք, հեքիաթ, առակ, վիպակ, նովել և այլն) և չափածո (բանաստեղծություններ, քառյակներ և այլն) ժանրերի ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման հիմնական բաղադրամասերն են՝

1. զրույց
2. բնագրի ընթերցում
3. բառային աշխատանք
4. նյութի մշակում կամ աշխատանք բնագրի վրա
5. բովանդակության վերարտադրումը կամ պատմելը
6. ամփոփումը կամ տրամաբանական եզրակացություն:

Զրույց

Ընթերցանության դասերին անցկացվող զրույցներն ըստ իրենց բնույթի ու անցկացման ժամանակի լինում են երեք տեսակ.

ա. նախապատրաստական, այսինքն՝ բնագրի ընթերցմանը նախորդող կամ ընթերցումը նախապատրաստող

բ. ուղեկցող, այսինքն՝ կարդալուն ուղեկցող կամ բնագրի վերլուծման հետ կապված
գ. ամփոփիչ կամ թեմայի ամփոփման հետ կապված

Զրույցի այս երեք ձևերն էլ հավասարապես գործադրվում են տարրական դասարաններում, երբեմն առանձին- առանձին, իսկ երբեմն էլ համատեղ: Իսկ թե զրույցի որ տեսակը երբ պետք է գործադրել, ուսուցիչն ինքը պետք է որոշի՝ ելնելով ընթերցվող բնագրի բնույթից, թեմայի դժվարությունից, աշակերտների պատրաստակամության աստիճանից և այլն: Զրույցի այս երեք ձևերն էլ բնագրի ընթերցումը գիտակցական ու արտահայտիչ, նյութի յուրացումը խորը, կայուն ու բազմակողմանի դարձնելու նպատակ են հետապնդում, սակայն առանձնահատուկ պայմաններում դրանցից ամեն մեկը տարբեր արդյունք կարող է տալ, ուստի դրանցից յուրաքանչյուրի գործադրությունը պետք է մտածված ու կշռադատված լինի: Նախապատրաստական զրույցը երբեք չպետք է սպառի բնագրի բովանդակությունը, այլ միայն պետք է մոտեցնի նրան, հող ստեղծի նրա ճիշտ ընկալման համար: Զրույցի մյուս ձևը կարդալուն զուգընթաց կամ բնագրի վերլուծման ժամանակ անցկացվող ուղեկցող զրույցն է, որի նպատակն է ուղղություն տալ աշակերտների մտքին, նրանց ներգրավել բնագրի վրա կատարվող տրամաբանական ու լեզվական աշխատանքներում, լրացուցիչ նյոր տեղեկություններ տալ ուսումնասիրվող նյութի շուրջ և այլն: Եթե նախապատրաստական զրույցն աշակերտներին մոտեցնում է բուն նյութին, ապա ուղեկցող զրույցը խորացնում է նյութի մեջ, բացում բոլոր չբացված դռները: Ինքնուրույն ընթերցանության դասերին ամենից ավելի հաճախ գործադրվում է ամփոփիչ զրույցը: Այն օգնում է գեղարվեստական ստեղծագործություններից բարոյախրատական ու դաստիարակչական հետևություններ անելու, իսկ գործնական բնույթի հոդվածներից ՝ անհրաժեշտ գործնական եզրակացություններ բխեցնելու, ինչպես նաև՝ ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութի մեջ առանձնացնելու այն նոր բառերն ու լեզվական ձևերը, որոնք երեխաները սովորել են նրանից՝ դրանով իսկ շեշտելով ուսումնասիրվող յուրաքանչյուր բնագրի լեզվական արժեքը:

Բնագրի ընթերցում

Բնագրի ուսումնասիրման աշխատանքը սկսվում է նրա ընթերցումից ուստի և այն թե՛ ժամանակի և թե՛ ուշադրության տեսակետից ինքնուրույն ընթերցանության դասի ամենակարևոր ու հիմնական մասն է կազմում: Տարրական դասարաններում ուսումնասիրման համար ընտրված բնագրի ինքնուրույն ընթերցումը բացառիկ կարևոր նշանակություն ունի ինչպես աշակերտների մեջ կարդալու հմտությունների մշակման և կարդալու վարպետության կամ տեխնիկայի զարգացման ու կատարելագործման, այնպես էլ տվյալ նյութի բովանդակության ընկալման տեսակետից:

Բնագրի ինքնուրույն ընթերցումը կարող է իրականացվել մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ, խմբովին, դերերով, ընտրովի, բացատրելով կամ մեկնաբանելով և անգիր, որոնցից ամեն մեկն ունի գործադրման իր որոշակի ոլորտներն ու ձևերը: Տարրական դասարաններում աշակերտները թե՛ դասարանում և թե՛ տանը գրքի վրա աշխատելիս՝ ավելի շատ պետք է ձայնով կարդան, քան լուռ, որովհետև թե՛ կարդալու տեխնիկայի մշակման ու կատարելագործման, և թե՛ կարդացածը հասկանալու տեսակետից այս տարիքում երեխաների համար սեփական ձայնի ունկնդրումը բացառիկ կարևոր նշանակություն ունի:

Լուռ կարդալն իր որակով ու դրսևորման ձևով, ըստ էության, մտովի կարդալ է, որովհետև իրականացվում է միայն աչքերի շարժումով:

Խմբովին կարդալը տարրական դասարաններում ամենից հաճախ գործադրվող ու արդյունավետ ձևերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու կարդալու տեխնիկան, ընդօրինակել տալու ուսուցչի կարդալու եղանակը, ձայնի տոնն ու հնչերանգը, ոտանավորի երաժշտությունը ու ռիթմը, որը լսելով դժվար է ընկալել ու ավելի քան յուրացնել:

Դերերով կարդալը ևս տարրական դասարաններում կարդալու ամենաարդյունավետ ու հանձնարարելի ձևերից մեկն է և գործադրվում է գրեթե բոլոր դասարաններում: Այն օգտագործվում է որպես կարդալու տեխնիկայի, հատկապես՝ արտահայտչականության մշակման միջոց:

Ընտրովի ընթերցումը ևս տարրական դասարաններում հանձնարարվող կարդալու ձևերից մեկն է:

Տարրական դասարաններում կարդալու գործադրելի ձևերից մեկն էլ բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն է, որն ունի դրսևորման տարբեր եղանակներ՝ նայած անհրաժեշտության: Բնագիրը բացատրելով ու մեկնաբանելով, ինչպես նաև ուղեկցող զրույցի ժամանակ, բառային աշխատանք կատարելով: Ուսումնասիրվող բնագրի ընթերցման ձևերից մեկն էլ անգիր ընթերցումը կամ անգիր կարդալն է, երբ ամբողջ բնագիրը կամ նրա մի մասը աշակերտները կարդում են առանց գրքի, բանավոր կերպով՝ նախօրոք անգիր արած լինելով այն:

Բառային աշխատանք

Բնագրի վրա տարվող աշխատանքի ձևերից մեկն էլ բառային աշխատանքն է, որը երեք կարևոր կողմ ունի՝ անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրում, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների հայտնաբերում և նոր բառերի ու դարձվածքների բացատրությունները կատարում են դասի տարբեր փուլերում՝ բնագրի առաջին ընթերցումից առաջ, առաջին ընթերցման ժամանակ և առաջին ընթերցումից հետո՝ նայած բացատրվող բառի կամ դարձվածքի բնույթին ու կիրառությանը: Նախապատրաստական զրույցի ժամանակ օգտագործվում և բացատրվում են այն բառերն ու դարձվածքները, որոնք կապված են նյութի

գլխավոր մտքի հետ; Բնագրի առաջին ընթերցման ժամանակ, առանց ընթերցումն ընդհատելու, միայն մեկ-երկու դիպուկ հոմանիշներով բացատրվում են այն բազմիմաստ բառերն ու դարձվածքները, որոնք իրենց կոնկրետ իմաստն ստանում են տվյալ բնագրում միայն, իսկ բնագրից դուրս կամ այլ բնագրում կարող են միանգամայն այլ իմաստներ արտահայտել: Այն բառերն ու դարձվածքները, որոնց կոնկրետ իմաստը չիմանալը կամ լավ չիմանալը չի կարող անդրադառնալ նյութի հիմնական բովանդակության ճիշտ ընկալման վրա, պետք է բացատրել բնագրի առաջին ընթերցումից հետո ուսուցչի կամ աշակերտների երկրորդ ընթերցման ժամանակ:

Տարրական դասարաններում անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրման ամենահիմնական ու հուսալի եղանակը բառը առարկայով բացատրելն է: Բառերի բացատրության ամենատարածված ձևերից մեկն էլ բառը նկարով բացատրելն է: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին երկու ձևերը չեն կարող բառիմաստը լավ մեկնաբանել ու հասցնել երեխաների գիտակցությանը, դիմում ենք բառը կամ դարձվածքը նկարագրելով բացատրելու եղանակին: Անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրման հանձնարարելի ձևերից մեկն էլ դրանք ծանոթ բառերի ու դարձվածքների կամ, ավելի ճիշտ՝ դրանց տակ դրված կոնկրետ հասկացությունների կամ առարկաների ու երևույթների հետ համեմատելն ու հակադրելն է: Բառերի բացատրման ամենատարածված ձևերից մեկն էլ բառը բառով փոխարինելն է, երբ անծանոթ բառի դիմաց դրվում է ծանոթ ու հայտնի բառ:

Տարրական դասարաններում անծանոթ բառերի բացատրման ձևերից մեկն էլ բառերի բառակազմական վերլուծությունն է: Անծանոթ բառերի բացատրման ձևերից մեկն էլ ընդհանուր հասկացության մասնավորումն է կամ կոնկրետ հասկացության ընդհանրացումը: Տարրական դասարաններում ընթերցվող բնագրերում հանդիպող բազմիմաստ բառերի ոչ բոլոր իմաստներն է, որ պետք է բացատրել երեխաներին, որովհետև այդ դեպքում երեխաները երկրորդական և հիմնական իմաստները կշփոթեն միմյանց հետ և չեն կարողանա բառերը տեղին ու ճիշտ օգտագործել: Պետք է բացատրել բառի միայն այն իմաստը, որ այն օգտագործվում է տվյալ բնագրում, բառի մյուս իմաստների բացատրումը պետք է թողնել այլ առիթների: Նոր բառերի շուրջ տարվող բացատրական աշխատանքն ունի երկու կողմ՝ անծանոթ բառերի բացատրում և բացատրած բառերի ուսուցում: Ուսումնասիրվող բնագրի շուրջ տարվող բառային աշխատանքի մասին խոսելիս չպետք է մոռանալ նաև բառատետրերի մասին: Բառերի բացատրման ու յուրացման ուղղությամբ տարվող այս աշխատանքները անկասկած կնպաստեն ոչ միայն բնագրի ճիշտ ընկալմանն ու գիտակցորեն կարդալուն, այլև կհարստացնեն երեխաների բառապաշարը, կզարգացնեն նրանց խոսքն ու մտածողությունը, որովհետև յուրաքանչյուր բառ իր որոշակի արժեքն ունի մարդու խոսքի և մտածողության համար:

Նյութի մշակում կամ աշխատանք բնագրի հետ

Նյութի հետագա մշակումը կամ բնագրի վրա տարվող աշխատանքը սովորաբար անցկացվում է աշակերտների ընթերցումից հետո, սակայն առանձին դեպքում այն կարող է նաև միաձուլվել աշակերտների ընթերցման ընթացքում բնագրի վրա տարվող բառային աշխատանքի հետ և նյութն ընդգրկել ամբողջովին՝ ոչ միայն լեզվական կամ ձևի տասակետից, այլև բովանդակության առումով: Այս աշխատանքի նպատակը ուսումնասիրվող նյութի բովանդակությունը երեխաների համար հնարավորին չափ պարզ դարձնելը, գործող անձերի ու դրանց գործողությունների ընդհանուր բնութագիրը տալը և դրանով իսկ երեխաներին ճիշտ ուղու վրա դնելն ու նյութի յուրացումն ապահովելն է:

Ուսուցչի ու աշակերտների ընթերցումից հետո պետք է միայն մի քանի ընդհանուր բնույթի հարցեր տալ՝ պարզելու համար, թե երեխաներն արդյոք հասկացե՞լ են, թե ու՞մ կամ ինչի՞ մասին է ուսումնասիրվող նյութև, ո՞վ կամ ովքե՞ր են նրա հիմնական գործող անձը կամ անձերը, ե՞րբ և որտե՞ղ է կատարվել այդ դեպքը, ի՞նչ կարծիքի են գործող անձերից յուրաքանչյուրի և ամբողջ բնագրի մասին, ի՞նչը և ինչու՞ դուր եկավ իրենց, ի՞նչը և ինչու՞ դուր չեկավ և այլն:

Այս հարցերի շուրջ բացված աշխույժ ու հետաքրքրական զրույցն աշակերտներին հնարավորություն է տալիս թափանցելու նյութի խորքը, հասկանալու բովանդակության մանրամասները, որոնք առաջին ընթերցման ժամանակ չեն հասել երեխաների գիտակցությանը: Այս տեսակետից հատկապես ուշադրության է արժանի նյութի դաստիարակչական (գաղափարական, բարոյական ու գեղագիտական) կողմի ճիշտ ընկալումը, որը միշտ չէ, որ հեշտությամբ հասնում է երեխայի գիտակցությանը:

Բովանդակության վերարտադրումը կամ պատմելը

Ուսումնասիրվող բնագրի բովանդակության վերարտադրումը նրա վրա տարվող աշխատանքի հիմնական ձևերից մեկն է: Մեր դպրոցներում պատմելը կամ բովանդակության վերարտադրումն ավելի շուտ դիտվում է որպես կարդացածի յուրացման միջոց և ոչ թե ուսուցման նպատակ,, մինչդեռ մայրենի տարրական դասընթացի հիմանական նպատակներից մեկն էլ պատմելու ուսուցումն է, որը նույնքան կարևոր է, որքան և կարդալու կամ գրելու ուսուցումը: Այլ բան է, երբ պատմելը դիտվում է որպես ուսուցման միջոց կամ սովորածը ստուգելու միջոց, և բոլորովին այլ, երբ այն դիտվում է որպես ուսուցման նպատակ: Առաջին դեպքում այն կիրառվում է ըստ անհրաժեշտության՝ որևէ նպատակի հասնելու համար, իսկ երկրորդ դեպքում այն նպատակն է և համանման բազմաթիվ միջոցներ ենք գործադրում այդ նպատակը

իրականացնելու համար: Դասարանում մշակված բնագրի բովանդակության վերարտադրումը կամ պատմելը, ըստ վերևում առաջադրված սկզբունքային պահանջի կիրառման, երկու հիմնական կողմ կարող է ունենալ՝

ա. պատմելու նախապատրաստում կամ ուսուցում

բ. բովանդակության վերարտադրում կամ պատմում, այսինքն՝ ուսուցչի կողմից իրականացվող աշխատանքը:

Պատմելու նախապատրաստում կամ ուսուցումը սկսվում է նյութի պլանը կազմելուց, որը դասարանում մշակելու համար նախատեսված բնագրի վրա կատարվող հիմնական աշխատանքներից մեկն է: Պլանը հակիրճ ձևով արտացոլում է գործողության հիմնական պահերը՝ իրենց հաջորդականության ու կապի մեջ, իսկ դա օգնում է աշակերտներին ճիշտ և հեշտ պատկերացնելու բնագրի բովանդակությունը, նրա մասին հաջորդականությունն ու փոխադարձ կապը, մասերի ու ամբողջ փոխհարաբերությունը: Տարրական դասարաններում ընթերցանության դասերին գործադրվում են նյութը մասերի բաժանելու և պլանավորելու մի շարք ձևեր՝ նկարներով, նկարելով և բառային, որը ունի դրսևորման մի քանի ձևեր՝ հարցերով, պատմողական նախադասություններով, անդեմ նախադասություններով ու վերնագրերով, որոնցից ամեն մեկն ունի կիրառման մեթոդական իր որոշակի ձևերն ու եղանակները: Նկարներով պլանը տարրական դասարաններում կազմվող պլանի ամենապարզ ու հեշտ ձևն է: Արդեն մշակված նյութի բովանդակությունը պատմել սովորեցնելու համար երեխաներին առաջադրում ենք բնագրի բովանդակությունը ներկայացնող մի քանի նկարներ և հանձնարարում այդ նկարները դասավորել այնպես, որ դրանց հերթականությունը համապատասխանի բնագրում նկարագրված գործողությունների հաջորդականությանը:

Նկարով պլան կազմելուց քիչ ավելի բարդ, բայց անհամեմատ ավելի ստեղծագործական աշխատանք է նկարելով պլան կազմելը: Դրա համար աշակերտները ուսուցչի օգնությամբ ու հսկողությամբ որոշում են , թե ինչպիսի նկարներով կարելի կլիներ արտահայտել կարդացած բնագրի բովանդակությունը: Իսկ երբ աշակերտները, բավականաչափ վարժված կլինեն նկարելով կամ նկարագրելով պլան կազմելու մեջ, աստիճանապար կարելի է անցում կատարել բառային պլանին՝ նկարների տակ նկարագրածին համապատասխան գրել տալով նկարի անունը, կամ այլ համառոտ, բայց դիպուկ կերպով արտահայտող բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը: Բառային պլանի ամենապարզ ձևը հարցական նախադասություններով կազմվող պլանն է: Բառային պլանի ձևերից մեկն էլ պատմողական նախադասություններով կազմվող պլանն է: Այն, ըստ էության, բնագրի խիստ համառոտումն է, ուր հիմնական բովանդակությունն արտահայտված է մի քանի նախադասությամբ:

Բառային պլանի ձևերից են նաև անդեմ նախադասություններով ու վերնագրերով (բառեր կամ բառակապակցություններ) պլանները: Պլանի այս ձևը շատ տարածված է, որովհետև մարդ իր դրած մեկ բառի տակ հաճախ ամբողջ շարք մտքեր է հասկանում և վերարտադրում, իսկ այդպիսի պայմանական պլան կազմելն ավելի հեշտ է, քան նախադասություններով պլան

կազմելը: Պլանի այս երկու ձևերն էլ լինում են երկու տեսակ՝ համառոտ և ընդարձակ: Սկզբնական շրջանում, երբ աշակերտները դեռ նոր են սովորում պլան կազմել, դրանք որքան հնարավոր է պետք է ընդարձակ ձևով կազմել, որպեսզի աշակերտը մի քանի մանրամասնություններ ավելացնելով կարողանա հասնել նյութի լրիվ վերարտադրմանը: Հետագայում աշակերտին պետք է վարժեցնել ընդարձակ պլանը համառոտելու կամ, այլկերպ ասած՝ ավելի մեծ ընդհանրացում կատարելու: Աշակերտներին պլան կազմել սովորեցնելու համար շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել կարդացած նյութը մասերի բաժանել սովորեցնելու, իսկ ապա նաև մասերը վերնագրելու և բնագրի վերնագիրը փոխել սովորեցնելու վրա, որը նյութի վրա տարվող աշխատանքի ամենակարևոր փուլերից մեկն է: Պատմելը, իր մեջ բովանդակելով պատմողի արտահայտած վերաբերմունքը իր պատմածի նկատմամբ, դրսևորում է այն ապրումներն ու զգացումները, որ նրա մեջ ծագել են այդ նյութը կարդալիս: Այդ վերաբերմունքն արտահայտվում է ձայնի ելևեջների, խոսքի տրամաբանական ու հոգեբանական շեշտի, դադարների ու տեմպի մեջ, որը կարևոր նշանակություն ունի ինչպես դաստիարակչական, այնպես էլ բանավոր խոսքի մշակման տեսակետից:

Հարկավոր է նաև նշել, որ պատմելիս աշակերտներին չպետք է ընդհատել, որովհետև ընդհատելիս կտրվում է երեխայի մտքի թելը, խախտվում են նրա մտքի տրամաբանական կապերն ու ամբողջականությունը, որը բացասաբար է անդրադառնում երեխայի մտածելու և խոսելու կարողությունների զարգացման վրա: Պատմելիս պետք է ուշադիր լսել աշակերտին և ապա հանգամանորեն նշել նրա պատմածի դրական և բացասական կողմերը, իսկ երբեմն էլ դասարանում քննարկման դնել, որպեսզի աշակերտներն իրենք գնահատել իրենց ընկերոջ պատմածը: Դա կբարձնացնի աշակերտների ակտիվությունը, կսովորեցնի պահանջկոտ լինել ինչպես իրենց ընկերոջ, այնպես էլ իրենց խոսքի նկատմամբ: Պատմելու ուսուցման մասին խոսելիս, բնականաբար, չի կարելի շրջանցել ուսուցչի պատմելը, որը պատմելու ուսուցման համար կարևոր նշանակություն ունի:

Ամփոփում կամ տրամաբանական եզրակացություն

Դասարանում մշակվող յուրաքանչյուր նյութի ուսումնասիրությունը պետք է ավարտվի ամփոփումով կամ տրամաբանական եզրակացությամբ: Բնագրի վրա տարվելիք աշխատանքներն ավարտելուց հետո այն պետք է ամփոփել՝ հիմնականում կանգ առնելով երեք կարևոր հարցերի վրա, դրանք են՝

ա. նյութի ուսումնասիրությունից ստացած գիտական ճանաչողական նոր տեղեկությունները

բ. նյութերից հանվող դաստիարակչական- բարոյական հետևությունները

գ. նյութի լեզուն՝ բառերը, դարձվածքները, արտահայտություններն ու լեզվական այլ ձևեր:

Ամփոփումը հիմնականում կատարում է հարցերով, որոնք ընդգրկում են բնագիրն ամբողջովին վերցրած և վերաբերում են նրանից հանվող գիտական, դաստիարակչական ու գեղագիտական եզրակացություններին: Հետևաբար, ամփոփիչ զրույցի համար ընտրված հարցերը պետք է շատ ընդհանրացնող ու հանգային լինեն, որպեսզի երեխային հարկադրեն պատասխանելու համար որոշակի հետևություններ անել: Նյութի ամփոփման նպատակով տրվող հարցերը նույպես պետք է իրենց բնույթով ընդհանուր լինեն, որ դրանց պատասխանելու համար աշակերտից պահանջվի նյութի բավականին խոր և բազմակողմանի իմացում, ընդհանրացումներ կատարելու և եզրակացություններ անելու կարողություն:

Երբեմն այդպիսի հիմնական և գլխավոր հարցերը պարզաբանելու համար անհրաժեշտ է լինում առաջադրելու նաև օժանդակ կամ լրացուցիչ հարցեր, որոնք հաճախ կոչվում են նաև հուշող հարցեր: Ամփոփման ժամանակ առաջադրվող հարցերը պետք է վերաբերեն ուսումնասիրված նյութից հանվող տրամաբանական եզրակացություններին:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակը կարդալու ուսուցումն է: Գրաճանաչության այբբենական շրջանում արդեն ձևավորվում են աշակերտների կարդալու կարողությունները: Աշակերտները կարդում են բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ապա պատմություններ: Այդ ամենը աշակերտներին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված:

Վերլուծական փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը՝ նկատի ունենալով, թե ընթերցողն ինչպես է կարդում: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը. ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ ավտոմատացված կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է. ընթերցողը կարդում է նախադասություններով:

Տարրական դասարաններում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի ընթերցումն իրականացվում է մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում, շարունակելով, բացատրելով կամ մեկնաբանելով, ընտրովի և դերերով: Կարդալու տեսակներից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա: Տարրական դասարաններում ընդունված է ձայնով կարդալը, քանի որ այն նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև կարդացածը հասկանալու կարողության ձևավորմանը:

Առանձնացվում է ձայնով կարդալու երկու տեսակ՝ բարձրաձայն և ցածրաձայն: Ձայնով և լուռ կարդալը միմյանցից տարբերվում են նրանով, որ մի դեպքում խոսքի արտաբերումն առկա է, իսկ մյուս դեպքում այն բացակայում է: Լուռ կարդալը շատ նման է ներքին խոսքին, իսկ ներքին խոսքը կապված է խոսքի մասնակի կամ կրճատ արտաբերման հետ:

Բարձրաձայն ընթերցանության հիմնական առանձնահատկությունն այն է, որ կարդացողը ոչ միայն իր համար է կարդում, այլև ուրիշների, ուստի պետք է այնպես կարդա, որ լսողը կարողանա հասկանալ կարդացածի բովանդակությունը:

Բարձրաձայն ընթերցելիս գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները: Բարձրաձայն ընթերցողի մոտ մի փոքր

դժվարություն է առաջանում, քանի որ բարձրաձայն կարդալու հետ միաժամանակ պետք է հետևի կարդացածի մտքին՝ այն ճիշտ հասկանալու համար, կարողանա գտնել կարդացածի միտքը արտահայտելու և այն լսողներին փոխանցելու ճիշտ եղանակը:

Տարրական դասարաններում աշակերտները դասարանում և տանը գրքի վրա աշխատելիս ավելի շատ պետք է ձայնով կարդան, քան լուռ, որովհետև թե՛ կարդալու կարողության ձևավորման և թե՛ կարդացածը հասկանալու տեսակետից այս տարիքում երեխաների համար սեփական ձայնի ունկնդրումը կարևոր նշանակություն ունի:

Լուռ կարդալը մտքում կարդալն է, այն իրականացվում է միայն աչքերի շարժումով՝ առանց խոսելու և ձայնի մասնակցության: «Անցնելով մտքում կարդալուն՝ աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել այն ներքին խոսքով»: Լուռ կարդալու ուսուցումը կատարվում է տարրական դասարաններում, երբ երեխայի մեջ ձևավորվում է կարդալու հմտությունը: Որպես կանոն՝ լուռ ընթերցում իրականացվում է այն դեպքում, երբ երեխան տիրապետում է կարդալու կարողության հմտություններին: Երբ երեխան նոր է սովորում կարդալ, նրա մոտ դժվարություն է առաջանում լուռ ընթերցելը, քանի որ սկսում է կարդալ աչքերի շարժմամբ և տեսած տառերն ու բառերը իրենց հնչյունային համարժեքների վերածելով: Լուռ ընթերցանությունը մեծ կշիռ է ունենում այն դեպքում, երբ աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի:

Լուռ կարդալու ուսուցումն սկսվում է դեռևս առաջին դասարանից, երբ երեխաները լուռ կարդալով հետևում են ուսուցչի կամ ընկերների կարդալուն: Եթե ձայնով կարդալու ուսուցումը կատարվում է թե՛ դասարանում, թե՛ տանը, ապա լուռ կարդալու ուսուցումը հիմանականում կատարվում է դասարանում, դասի ընթացքում՝ ուսուցչի հսկողությամբ: Լուռ կարդալով, աշակերտը սկսում է հասկանալ կարդացածի բովանդակությունը, սակայն, յուրացնելով բովանդակությունը, երեխան հաճախ դժվարանում է բառերով արտահայտել այն կամ հասկացածը հաղորդել մյուսներին: Նման իրավիճակում նպատակահարմար է երեխաներին հանձնարարել բարձրաձայն պատմել այն, ինչ կարդացել են ու հասկացել:

Շարունակելով կարդալ: Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում: Երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, որ կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով: Հետևում է ամբողջ դասարանը:

Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է նյութի բովանդակությունը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով: Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակության հասկացմանը, կարդալու կարողության կատարելագործմանը, վերլուծական և քննադատական

մտածողության զարգացմանը: Բնագիրը բացատրելով կամ մեկնաբանելով կարդալ կարելի է տալ մի քանի ձևով՝ բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, բառային աշխատանք կատարելով, այսինքն՝ անծանոթ բառերի բառիմաստները բացատրելով, ուղղագրություն բացատրելով, այսինքն՝ բնագրի յուրաքանչյուր բառ, որը ուղղագրական արժեք ունի, հատուկ ուշադրության է առնվում: Կարելի է նաև բնագիրը կարդալ՝ կետադրությունը բացատրելով:

Մեկնաբանող կամ հատվածաբար ընթերցանությունը նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, կերպարների էությունն ըմբռնելուն, դեպքերի տրամաբանական և պատճառահետևանքային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը և այլն՝ դրանով իսկ ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը, հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները: Այսպիսի ընթերցանությունը նպաստում է աշակերտների՝ կարդալու որակական հատկանիշների պահպանմանը ընթերցելու կարողության կատարելագործմանը և լուռ կարդալու ունակության ձևավորմանը:

Կարդացածն ընտրովի վերարտադրելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը. 1. արտահայտիչ կարդալ բնագիրը, փորձել թափանցել նրա բովանդակության մեջ,

2. մեկ անգամ ևս կարդալ բնագիրը, որոշել նրա թեման և այն բաժանել տրամաբանական մասերի,

3. խմբավորել այդ հատվածները, վերնագրել,

4. առանձնացնել միևնույն պայմանանշան ունեցող հատվածները, դասավորել՝ ստեղծագործության մեջ դրանց գրված հաջորդականությամբ,

5. որոշել ընտրված հատվածի տրամաբանական կառուցվածքը,

6. պատմել ամբողջ բնագրից հատուկ հանձնարարությամբ ընտրված հատվածը: *Դերերով ընթերցանությունը* տարրական դասարաններում կարդալու ամենաարդյունավետ և հանձնարարելի ձևերից մեկն է և գործադրվում է գրեթե բոլոր դասարաններում:

Դերերով ընթերցանության ժամանակ պետք է ընտրել այնպիսի բնագիր, որը հարուստ կլինի գործող անձերով, որպեսզի հնարավոր լինի շատ աշակերտներ ընդգրկել: Դերերով կարդալիս պետք է պահպանել մի քանի պայման.

• դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ,

• որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի կամենում այն կատարել,

• երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին:

Դերերով կարդալիս աշակերտները սխալվում են հեղինակի խոսքերի ընթերցման ժամանակ: Անհրաժեշտ է դերերով կարդալուց առաջ ուսուցիչը աշակերտների հետ միասին որոշի, թե քանի գործող անձ և հերոսներ են խոսում բնագրում:

Պետք է երեխաներին նախապատրաստել դերերով կարդալուն: Նախ կարևորվում է նյութի սահուն և հասկանալով կարդալը, ապա գլխավոր մտքի որոշումը, ենթատեքստի կռահումը և հերոսների բնավորությունների, տրամադրությունների և դրանց պատճառների բացահայտումը: Այս ամենին նպաստում է ընտրովի ընթերցանությունը: Այդ իսկ պատճառով էլ դերերով կարդալուն անպայման պիտի նախորդի կարդալու այդ տեսակը:

Մայրենիի դասերին 15-20 րոպե պետք է հատկացնել բնագրի ընթերցմանը, սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է աշակերտներին: Այդ իրավիճակից խուսափելու համար պետք է ընթերցումը կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները՝ շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի, դերերով: Կարդալու կարողության ձևավորման խնդրում կարևոր է, թե ով է առաջինը կարդում դասի համար նախատեսված ստեղծագործությունը՝ ուսուցի՞չը, թե՞ աշակերտը, և ինչպե՞ս պետք է այն կարդալ՝ մաս-մա՞ս, թե՞ ամբողջությամբ: Գործնական բնույթի նյութերի ուսուցումը պետք է տարվի մասից դեպի ընդհանուրը գնացող հաջորդականությամբ, քանի որ դրանցում պարունակվող աշխարհաճանաչողական գիտելիքների մասերով ուսուցումը ավելի դյուրընկալ է: Բնագրի ամբողջությամբ կարդալուց հետո է միայն հնարավոր հասկանալ նրա հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը, և միայն այդ դեպքում ստեղծագործությունը կարող է երեխաների վրա դաստիարակչական ներգործություն ունենալ, առաջացնել համանման հույզեր ու զգացմունքներ: Այս դեպքում նախ ամբողջությամբ պետք է կարդալ բնագիրը և միայն դրանից հետո մասերով վերլուծել: Սա նշանակում է, որ բնագրի առաջին ընթերցումը պետք է լինի կատարյալ, արտահայտիչ ու հուզական, որպեսզի ստեղծագործության միտքն ամբողջությամբ հասնի աշակերտին:

Եզրակացություն

Ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչողություն ունի, քանի որ մատաղ սերունդը համացանցը գերադասում է գրքից: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել հնարավորինս շուտ՝ սկսած գրաճանաչության շրջանից: Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Այդ աշխատանքը այնպիսի զորություն պիտի ունենա, որ երեխաներին կապի գրքին, որ դիմադրի համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դրանցով տրվող հսկայածավալ տեղեկատվության դաշտում պահպանի իրենը, անկրկնելին ու անփոխարինելին: Այդ աշխատանքը հարկավոր է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, որպեսզի գիրքը դառնա երեխայի ‹‹լավագույն ուղեկիցն ու բարեկամը››:

Այսպիսով միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից: Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ կարդալու կարողությունը մշակելով, որովհետև այն մարդու մտավոր զարգացման ու առաջընթացի հիմնական նախապայմանն է: Որքան երեխաների մեջ ամուր և հաստատուն դրվեն ընթերցանության կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու անփոխարինելի միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Լ. Մ., Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման կարևոր գործոն, «Զանգակ», Երևան 2015:

2. Բալայան Լ., Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, «Նախաշավիղ» 3-4. 2009, 128 էջ:

3. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան 2018, էջ 315:

4. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան 1980, էջ 152